

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ռուսիայի միջև բարեկամության և համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսիան, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

Ելնելով բարեկամության, համագործակցության և փոխընթերցման ավանդույթներից,

համոզված լինելով, որ պետությունների միջև կապերը պետք է հիմնված լինեն ազատության, ժողովրդավարության, հասարակական արդարության և համերաշխության համամարդկային արժեքների, մարդու հիմնական իրավունքների հարգանքի վրա,

նկատի ունենալով երկու երկրներում և ընդհանրապես Եվրոպայում տեղի ունեցող ժողովրդավարական հասարակության կայունացմանն ուղղված անդառնալի գործընթացը և այլ խոր փոփոխությունները, որոնք հնարավորություն ընձեռեցին եվրոպական մակարդակով ստեղծել և զարգացնել այնպիսի հարաբերություններ և մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն բոլոր պետությունների անվտանգությունն ու բոլոր մակարդակներով հետագա համագործակցությունը,

կրկին հաստատելով իրենց նվիրվածությունը Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության և Եվրոպայի անվտանգության և համագործակցության սկզբունքներին և նպատակներին,

որոշելով համատեղ գործել ընդհանուր շահերին վերաբերող բոլոր ոլորտներում երկկողմ հարաբերությունների զարգացմանն ուղղությամբ,

ճանաչելով միջազգային իրավունքի գերակայությունը պետությունների միջև հարաբերություններում,

որոշելով նոր՝ հավասարության և անաչառության հիմքերի վրա դնել իրենց համագործակցության և փոխընթերցման հարաբերությունները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսիան զարգացնելու են իրենց կապերը փոխադարձ հարգանքի, վստահության և

համագործակցության հիման վրա: Երկու երկրների միջև կապերը կիրականացվեն ինչպես այլ պետությունների հետ, համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության, Հելսինկիի Եզրափակիչ ակտով և ԵԱՀԽ-ի այլ փաստաթղթերով, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով և սկզբունքներով:

Հոդված 2

Երկու Կողմերը գործելու են հանուն Նոր Եվրոպայի Փարիզի Կանոնադրության ոգով վերածելու եվրոպական պետությունների մի ընկերակցության, որը կհիմնի կայուն խաղաղության, իրավունքների և ժողովրդավարության տարածաշրջան, և ստեղծելու մայրցամաքի վրա անվտանգության ապահովման և համագործակցության որոշակի արդյունավետ մեխանիզմներ այս շրջանակներում:

Նրանք ընդունում են այն ավանդը, որը գոյություն ունեցող եվրոպական կառույցները կարող են ներդնել մայրցամաքում անվտանգության ամրապնդման և համագործակցության զարգացման գործում՝ սերտորեն իրականացնելով համագործակցությունը այդ կազմակերպությունների հետ:

Հոդված 3

Երկու Կողմերը վերահաստատում են ուժի գործադրման և միջազգային փոխհարաբերություններում ուժի սպառնալիքով հանդես գալու անհանդուրժելիությունը և խաղաղ ճանապարհով միջազգային հարցերի լուծման անհրաժեշտությունը:

Նրանք գործելու են տարածայնությունները խաղաղ ճանապարհով, համապատասխան մեխանիզմների միջոցով կարգավորելու ուղղությամբ՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության:

Եվրոպական կոնտեքստում նրանք գործելու են տարբեր հաստատությունների արդյունավետ աշխատանքի և տարածայնություններն ու կոնֆլիկտները խաղաղ ճանապարհով լուծելու համընդհանուր մեթոդների օգտագործման ուղղությամբ:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը փոխադարձաբար ճանաչում են միմյանց ներկայիս սահմանները և հարգելու են Կողմերից յուրաքանչյուրի տարածքային ամբողջականությունը:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը խուսափելու է միջազգային իրավունքների համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին հակասող ցանկացած գործողությունից, որը կարող է վնասել Պայմանավորվող մյուս կողմի սահմանների անձեռնմխելիությանը և տարածքային ամբողջականությանը և ոչ մի կերպ չի աջակցելու նմանօրինակ գործողություններին:

Հոդված 5

Երկու Պայմանավորվող կողմերը օժանդակելու են կոլեկտիվ անվտանգության միջոցառումների իրագործմանը, որոնք նախատեսված են Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 7-րդ գլխում:

Եթե Կողմերից մեկը գտնում է, որ ինչ-որ նոր իրավիճակ սպառնում է իր անվտանգության շահերին, նա կարող է դիմել մյուս Կողմին, որպեսզի նրանք կարողանան անհապաղ խորհրդակցություններ սկսել:

Հոդված 6

Երկու Կողմերը գործելու են ԵԱՀԽ-ի շրջանակներում՝ ռազմական ուժերի և բանակների հավասարակշիռ կրճատմանն աջակցելու, նաև մայրցամաքում վստահությունն ու կայունությունը ամրապնդելու ուղղությամբ:

Բոլոր միջազգային բազմակողմ բանակցությունների ժամանակ, որոնց իրենք կմասնակցեն, Կողմերը միասին կգործեն միջազգային խիստ և արդյունավետ հսկողության ներքո զինաթափման իրականացման համար:

Նրանք համաձայնեցված մակարդակներով կանցկացնեն փոխանակումներ ռազմական բնագավառում համապատասխան ծրագրերի հիման վրա:

Հոդված 7

Հայաստանի Հանրապետությունը և Ռումինիան նպաստելու են երկկողմ տնտեսական կապերի զարգացմանն ու բազմազանեցմանը՝ հավասարության, համագործակցության, ընկերակցության և փոխշահավետության հիմունքով:

Կողմերը հանդես են գալու միասնական եվրոպական տարածաշրջանի ստեղծման օգտին, որը կնպաստի տնտեսական

օպտիմալ զարգացմանը, յուրաքանչյուր երկրում իրավիճակի բարելավմանը, ինչպես նաև մայրցամաքում համագործակցության ընդլայնմանը:

Հոդված 8

Երկու Կողմերը շարունակելու են զարգացնել արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում փոխշահավետ կապերը՝ իրենց մարդկային և նյութական ռեսուրսները ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով:

Նրանք օժանդակելու են գոյություն ունեցող փոխանակումների արագ իրականացմանը, ինչպես նաև այլ ծրագրերի իրագործմանը՝ համաձայնեցնելով իրողությունների և երկու երկրների շահերի հետ:

Հոդված 9

Երկու Կողմերը սերտորեն համագործակցելու են իրենց ազգային տնտեսական զարգացման համար բացարձակ նշանակություն ունեցող հարցերում՝ մասնավորապես հետևյալ ոլորտներում.

էներգիայի զարգացում, դյուրավառ վառելանյութեր, բնական ռեսուրսներ, ներառյալ միջուկային էներգիայի օգտագործումը խաղաղ նպատակներով, գյուղատնտեսության զարգացում, արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն, փոխադրում և ենթակառուցվածք, բնական ռեսուրսների առաջնային կարևորություն փոխադարձ տնտեսական կարիքները բարելավելու նպատակով, ընդհանուր սպառման ապրանքների արտադրություն:

Երկու Կողմերը համատեղ և այլ պետությունների հետ միասին աշխատանք կծավալեն՝ օժանդակելու և իրագործելու տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցությանն ուղղված ծրագրերը:

Հոդված 10

Կողմերը կարևորագույն նշանակություն են տալիս շրջակա միջավայրի պաշտպանությանը: Այս ոլորտում նրանք կշարունակեն երկկողմ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցությունը: Երկու Կողմերը աջակցելու են միջավայրի պաշտպանությանը նվիրված իրազեկ հաստատությունների և հատուկ ծրագրերի իրագործմանը:

Հոդված 11

Հայաստանը և Ռուսիան կզարգացնեն իրենց տնտեսական հաստատությունների և այլ տնտեսական գործակալությունների միջև համագործակցությունն ու անմիջական կապերը, ինչպես նաև կհաստատեն համատեղ ձեռնարկություններ և փոխշահավետ համագործակցության այլ արդյունավետ միջոցներ:

Նրանք կգործեն տնտեսական միավորումների և այլ գործակալությունների պայմանների և աշխատանքների բարելավման, հատկապես ուղղակի ներդրումների, ներդրված կապիտալի պաշտպանության և կրկնակի հարկումից խուսափելու ուղղությամբ:

Նրանք կհամագործակցեն տնտեսական և հասարակական բնագավառների որակյալ մասնագետների ուսուցման և պատրաստման հարցերում:

Նրանք կխորհրդակցեն և կհամագործակցեն տնտեսության և կառավարման բնագավառի ծրագրերի իրագործման ուղղությամբ:

Հոդված 12

Կողմերը կզարգացնեն համագործակցությունը հիմնարար և կիրառական հետազոտությունների բնագավառում՝ իրենց արդյունաբերության մեջ և տնտեսության այլ ճյուղերում ժամանակակից տեխնոլոգիաներ օգտագործելու նպատակով:

Նրանք կօժանդակեն համատեղ ծրագրերի և ձեռնարկությունների ստեղծմանը, գիտնականների և հետազոտողների փոխանակմանը և համագործակցության այլ ուղիների զարգացմանը՝ զխավորապես նպատակ ունենալով հետազոտական աշխատանքների կարողության և արդյունավետության մակարդակի բարձրացումը:

Հոդված 13

Նկատի ունենալով հայ և ռուսի ժողովուրդների միջև ստեղծված համագործակցության և մշակութային ավանդական կապերը և ցանկանալով իրենց ներդրումն ունենալ մայրցամաքի բոլոր ժողովուրդների համար մատչելի եվրոպական մշակութային տարածքի ստեղծման խնդրում երկու կողմերը կաջակցեն մշակույթի, կրթության և տեղեկատվության ասպարեզներում իրենց հաստատությունների, վարչատարածքային կազմակերպությունների, անհատ անձանց և ոչ

կառավարական կազմակերպությունների փոխանակումների զարգացմանը:

Երկու Կողմերը կօժանդակեն համալսարանների և բարձրագույն կրթության այլ հաստատությունների, հետազոտական կենտրոնների, մշակութային կազմակերպությունների և մամլո կենտրոնների միջև ուղղակի համաձայնագրերի կնքմանը:

Նրանք կխրախուսեն տեսալսողական արվեստների, կինոյի, թատրոնի, երաժշտության և գեղարվեստի ասպարեզներում փոխանակումները և համագործակցության վերաբերյալ նախաձեռնությունները:

Հոդված 14

Երկու Կողմերը կապահովեն Հայաստանի Հանրապետությունում ռումինական ծագում ունեցող անձանց և, համապատասխանաբար, Ռումինիայում հայկական ծագում ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունն ու հովանավորությունը՝ համաձայն ընդունված միջազգային օրենքների, համընդհանուր նորմերի և ԵԱՀԽ փաստաթղթերի:

Հոդված 15

Կողմերը կնպաստեն երկու երկրների քաղաքացիների շփումներին: Նրանք կնպաստեն հայ և ռումին ժողովուրդների փոխձանաչմանն ու փոխհամաձայնությանը, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, հաստատությունների և միությունների միջև կապերի զարգացմանն ուղղված ջանքերին:

Հոդված 16

Կողմերը կզարգացնեն իրենց համագործակցությունը օրենքի հարկադրման, իրավաբանության և հյուպատոսության ասպարեզներում՝ հեշտացնելու երկու երկրների քաղաքացիների ճամփորդություններն ու այցելությունները, ինչպես նաև լուծելու ճանապարհորդության արգելքից բխող մարդասիրական և սոցիալական խնդիրները, ինչպես նաև պայքարելու և կանխելու թմրադեղերի, զենքի և արվեստի գործերի ապօրինի փոխադրումները, նաև մաքսանենգությունը և ահաբեկչությունը:

Հոդված 17

Պայմանավորվող կողմերը համաձայնեցին ընդլայնել և խորացնել միջազգային կյանքին, Եվրոպայում անվտանգությանն ու համագործակցությանը, երկկողմ կապերի զարգացմանը, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերին վերաբերող խորհրդակցությունները համապատասխան մակարդակներով:

Այդ առումով երկու Կողմերը կզարգացնեն կապերը իրենց խորհրդարանների, կառավարությունների, գլխավոր հաստատությունների, ինչպես նաև երկու երկրների տեղական վարչական մարմինների միջև:

Հոդված 18

Երկու Կողմերը կընդլայնեն և կկատարելագործեն իրենց փոխհարաբերությունների հաստատագրված շրջանակը՝ համաձայն իրենց երկրների տնտեսական, սոցիալական և իրավական կառույցների, ինչպես նաև Եվրոպայի ընդհանուր զարգացման համեմատ:

Հոդված 19

Սույն Պայմանագրի վերը նշված հարցերը ոչ մի դեպքում չեն դիպչում Կողմերի՝ այլ պետությունների հետ ունեցած պարտավորություններին և ուղղված չեն որևէ այլ պետության դեմ:

Հոդված 20

Սույն Պայմանագիրը ստորագրված է 15 տարով:

Այն կվավերացվի ըստ յուրաքանչյուր երկրի ներպետական ընթացակարգի և ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակման օրից 30 օր հետո:

Պայմանագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի, ամեն անգամ՝ 5 տարի ժամանակով, բացառությամբ այն դեպքի, երբ Կողմերից մեկը մյուս Կողմին գրավոր կհայտնի Պայմանագիրը չեղյալ հայտարարելու իր որոշումը տվյալ ժամկետը լրանալուց առնվազն մեկ տարի (360 օր) առաջ:

Կատարված է Բուխարեստ քաղաքում 1994 թվականի սեպտեմբերի 20-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռումիներեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 1996 թվականի մարտի 25-ից: